



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ապրիլի 2006թ.

N224

ք.Ստեփանակերտ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ ԵՐԿՐԱԲԱՆԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հաստատել օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

ԿԱՐԳ
ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԵՐԻ
ԵՐԿՐԱՔԱՆԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են օգտակար հանածոների հանքավայրերի երկրաբանատնտեսագիտական գնահատման աշխատանքների նպատակները, դրանց իրականացման հիմնական սկզբունքներն ու դեպքերը և կատարման իրավական հիմքերը:

2. Օգտակար հանածոների հանքավայրերի կամ դրա առանձին տեղամասի (այսուհետ՝ հանքավայր) երկրաբանատնտեսագիտական (արդյունաբերական) գնահատումը (այսուհետ՝ գնահատում) կոնկրետ հանքավայրի արդյունաբերական նշանակության որոշման և դրա սահմաններում պարփակված օգտակար հանածոների պաշարների հաշվարկման համար անհրաժեշտ կոնդիցիաների պարամետրերի հիմնավորմանն ուղղված դաշտային և (կամ) աշխատանոցային աշխատանքների համալիր է:

3. Հանքավայրի գնահատումը կատարվում է դրա շահագործման առավել արդյունավետ եղանակների, տեխնոլոգիաների ու տեխնիկական միջոցների ընտրության, կապիտալ ներդրումների, շահագործական ծախսերի, եկամուտների, շահույթի և այլ հիմնական տեխնիկատնտեսական ցուցանիշների կանխատեսման միջոցով: Նշված խնդիրները լուծվում են հանքավայրի վերաբերյալ գնահատման պահին կուտակված ամբողջ երկրաբանական տեղեկատվության և հանրապետությունում սոցիալ-տնտեսական արդի պայմանների, շուկայի ընթացիկ վիճակի, գիտության ու տեխնիկայի նվաճումների հաշվառմամբ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների և կանխատեսումային ռեսուրսների դասակարգման (այսուհետ՝ դասակարգում) դրույթներին համահունչ:

4. Հանքավայրի գնահատումն իրականացվում է դրա երկրաբանական ուսումնասիրության և շահագործման ընթացքում, իսկ սույն կարգի 7-րդ կետում նշված դեպքերում՝ նաև հանքարդյունահանման լիցենզիայի (հատուկ լիցենզիայի) տրամադրման ու լիցենզային պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածում:

5. Հանքավայրի գնահատումը երկրաբանական ուսումնասիրության արդյունքներով եզրափակում է դրա մանրագնին հետախուզման փուլը, և կատարվում է ուսումնասիրություն գործող լիցենզիայի (հատուկ լիցենզիայի) շրջանակներում:

Հանքավայրի գնահատումն ընդերքօգտագործողի ցանկությամբ, անարդյունավետ ծախսերի ռիսկը նվազեցնելու նպատակով, կարող է իրականացվել նաև դրա որոնողագնահատման և (կամ) նախնական հետախուզման փուլերում: Այդ աշխատանքները

նույնպես կատարվում են տվյալ հանքավայրի ուսումնասիրության լիցենզիայի (հատուկ լիցենզիայի) շրջանակներում:

6. Շահագործվող հանքավայրի գնահատումն իրականացվում է դրա արդյունաբերական գնահատականը և կոնդիցիաների պարամետրերը՝ լրահետախուզմամբ և շահագործական հետախուզմամբ համալրված ու ճշգրտված երկրաբանական տեղեկատվությանը, ինչպես նաև հանրապետության սոցիալ-տնտեսական և շուկայի արդի պայմաններին, գիտության ու տեխնիկայի ներկայիս մակարդակին համապատասխանեցնելու նպատակով (այսուհետ՝ վերագնահատում):

Այս աշխատանքները շարունակական են և մշտապես ուղեկցում են հանքավայրի շահագործման գործընթացը: Դրանք պետք է նախատեսվեն հանքավայրի շահագործման նախագծում և իրականացվեն հանքարդյունահանման լիցենզիայի (հատուկ լիցենզիայի) շրջանակներում:

Շահագործվող հանքավայրի վերագնահատման արդյունքները պարտադիր ենթակա են ամփոփման և պետական ընդերքաբանական փորձաքննության՝ դասակարգման 32-րդ կետով նախատեսված ժամկետներում և դեպքերում:

7. Հանքարդյունահանման լիցենզիայի (հատուկ լիցենզիայի) տրամադրման ու լիցենզային պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածում հանքավայրի վերագնահատումը կատարվում է, եթե փոփոխվել են հանքահումքի որակին ստանդարտներով կամ տեխնիկական կանոնակարգերով ներկայացվող պահանջները և (կամ) բացահայտված է հանքավայրի նախկինում տրված գնահատականի անհամապատասխանությունը երկրի սոցիալ-տնտեսական և շուկայի արդի պայմաններին, գիտության և տեխնիկայի ներկայիս մակարդակներին:

Սույն կետում նշված աշխատանքները կարող են իրականացվել ինչպես լիազոր մարմնի, այնպես էլ ընդերքօգտագործողի նախաձեռնությամբ և պահանջում են օրենքով սահմանված կարգով ուսումնասիրության լիցենզիայի ձևակերպում:

8. Հանքավայրերի գնահատման կամ վերագնահատման նյութերը լիազորված մարմնի կողմից ենթակա են ընդերքաբանական փորձաքննության՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 28-ի թիվ 287 որոշմամբ հաստատված հետախուզված պաշարների և ընդերքի մասին այլ տեղեկատվության պետական ընդերքաբանական փորձաքննության կարգի:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս. Գրիգորյան